Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1210[2]-15.07.2011-SS-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՀՕ-5-Ն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18) որոշում է ընդունում Երևանի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ, որում պետք է նշվեն՝ օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը, ընդ որում՝ հողամասերի օտարման տարեկան ծրագրի մեջ պետք է նշվեն նաև հողամասերի գտնվելու վայրը, ծածկագրերը, Երևանի գլխավոր հատակագծով սահմանված նպատակները և օտարման եղանակները.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ Ի Կ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության Հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Հ. Մարգարյան	Առաջարկվում է. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ կետի «հիման վրա» բառերից հետո լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Աճուրդով վաճառվող հողամասերի նախկին բարեխիղճ վարձակալներն իրենց կողմից վարձակալած հողի աճուրդին մասնակցելու ժամանակ ստանում են նախապատվության իրավունք»: «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի «գործառնական նշանակությունը» բառերից հետո դնել ստորակետ կետադրական նշանը և նախադասությունը շարունակել հետևյալ բովանդակությամբ. «աճուրդին նախապատվության իրավունքով մասնակցող անձանց տվյալները»: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի «օտարման եղանակները» բառերից հետո դնել ստորակետ կետադրական նշանը և նախադասությունը շարունակել հետևյալ բովանդակությամբ. «աճուրդին նախապատվության իրավունքով մասնակցող անձանց տվյալները»:	Չի ընդունվել	Առաջարկությունները չեն ընդունվել՝ նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ և 49-րդ հոդվածների, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 68-րդ հոդվածի 8-րդ մասի, 72-րդ հոդվածի, 78-րդ հոդվածի 7-րդ մասի, 85-րդ, 87-րդ և 96-րդ հոդվածներով սպառիչ կարգավորված են հողամասի նկատմամբ նախապատվության իրավունքի հետ կապված իրավահարաբերությունները, մասնավորապես՝ հողամասի օգտագործման տրամադրման, ինչպես նաև օտարման ժամանակ նախապատվության իրավունքի հետ կապված հարցերը: Այդ առումով, գտնում ենք, որ նախապատվության իրավունքի հետ կապված իրավահարաբերությունները չեն հանդիսանում ներկայացված նախագծերի կարգավորման առարկան: